Բ. ՏԱՐԻ — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 7 ՅՈՒԼԻՍ 1899 — ԹԻՒ 143

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ուղարկուոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Երրամսեայի համար Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
Ամերիկայի համար
Տարեկան 2.50 տ.
Վեցամսեայ 1.25 »

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Յանձնուցման տոմսի առաջին տեսակի համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքեն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լլայ։

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Յ. ԻՐԻՔԻԱՍԵԱՆ

Ղեկակ եւ դրամ ղրկել
Խմբագրութեանս հասցեին

—

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

—

Գրութիւնք եւ չեն տրուիր

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

ԱԶԴ

—

Պուլկարական Գիմնազիոնի ուսուցիչ մը, կուղէ պուլկարերէնի մասնաւոր դասեր աւանդել նոյնպէս եւ ուրիշ առարկաներ, գիտէ եւ ֆրանսերէն։

Հասցէ, «Շարժումի» խմբագրատունը։

ՎԵՐՋԱՊԷՍ

—

Հայաստանում թագաւորում է սովը եւ աղքատութիւնը. հայ ժողովուրդը դուցէ իր կեանքի մէջ այսպէս տանջուած չլինի նիւթապէս, բարոյապէս եւ ֆիզիքապէս. թէեւ նա միշտ, անընդհատ, ենթակայ է եղել թալանի, սովի, կոտորածի։ Հայաստանի դաշտերից եւ լեռներից շարունակ լսվել եւ աշխարհիս ամենահեռու անկիւններն են հասել մեր երկիրը աշխութեամբ պահպանող հարազատ ժողովրդի յալաղին, աղիողորմ եւ օգնութիւն հայցող ճիչերը...

* * *

Այո, հայաստանցին միշտ օգնութիւն է խնդրել եւ այդ խնդրածը եղել է միշտ հաց եւ դրամ։ Այդ օգնութիւնը խնդրել է լոկ իր գոյութիւնը, սարկական կեանքը երկարացնելու համար։

Նա երբէք չէր մտածել որ այդ տեսակ օգնութիւնից յետոյ էլ իր վիճակը նոյնը պէտք է մնար, իր վէրքերը արմատականապէս չը պէտք է բժշկվէին. ու առժամանակեայ երեւակայական հանգստութեանը կրկին պէտք է յաջորդէր այն դժոխային կեանքը, որին ենթակայ է ամէն մի սարուկ ժողովուրդ, մանաւանդ, դազան, մարդկային զգացմունքներից բոլորովին զուրկ թուրքի սարուկ ժողովուրդը։

* * *

Հայաստանցին շարունակ հաց էր մուրում. հաց եւ հաց. առանց մտքովը անցնելու, որ իրան՝ հացից աւելի, մի ուրիշ բան էր հարկաւոր։ Հացը սատնում էր, ինքն էլ քառապատիկ եռանդով եւ չարքաշութեամբ մշակում իր հողը կամ բեռ կրում, բայց մի քանի տարուց յետոյ՝ կրկին բռնակալական պատուհասները գալիս էին եւ կրկին տակնուվրայ անում հայի ստրկական խաղաղութիւնը։ Եւ ընտրկացած հայը նորից աղաղակում էր—անօթի ենք, հաց, հաց տուէք։

* * *

Այսօր հայի դրութիւնը դուցէ աւելի անտանելի է. հայը այսօր դուցէ հացի աւելի պէտք ունի, եւ կարելի է ասել որ աւելի մեծ չափով հաց է ստանում թէ օտարից եւ թէ իր բարեկեցիկ եղբայրներից։

Այսօր հայը նորից օգնութիւն է աղաղակում, բայց բոլորովին տարբեր կերպով։ Նա զգացել է որ միայն հաց չէ իրեն պէտք։ Նա համոզվել է որ այդ նոր ընտացած հացն էլ կը վերջանայ. այդ էլ իր ձեռքիցը կը խլեն թուրքը եւ քուրդը. դրա համար էլ նա հացի հետ միասին աղաղակում է.

— Զէնք, զէնք եւ զէնք։

— Անտանելի է մեր վիճակը, մեր տառապանքը անվերջ է, միայն զէնքով, զէնքով մենք կարող ենք ապահով վիճակ ստեղծել։

Այդ աղաղակով չարդված եւ փշրված հայ ժողովուրդը չէ դիմում օտարին, չէ դիմում պատրիարքին, կաթողիկոսին եւ հայ դրամատէրին. չէ. նա դիմում «ընկերութիւններին»։

Հայ ժողովուրդը զգացել է զէնքի պէտքը, համոզվել է որ այդ կարող են իրան հայթայթել միմիայն ընկերութիւնները, որոց «Սերոբ փաշաներով» ինքը ոգեւորվում է եւ անկեղծ հրճուանքը արտայայտում որ Սերոբներն քիթն անգամ չէ արնում, թուրք զօրքերի հետ մղած կռիւների մէջ։

Այս տողերը բանաստեղծութիւն չեն, եւ ոչ էլ լաւատես մարդու բաղձանքներ։ Չէ, այս տողերը հայ ժողովուրդի հարատեւ եւ իր տանջանքներով մարտիրոսացած զաւակների գրած նամակներից են բխում։

* * *

Այո՛, տարբերութիւնը մեծ է ներկայ հայ ժողովրդի եւ հինի միջեւ։ Վերջապէս հայ ժողովուրդը ինքը սկսեց զէնք աղաղակել։ Եւ հիմա է որ հայկական յեղափոխութիւնը հաստատ հող կունենայ մեր երկրի մէջ, ուաւելի դրական քայլեր կառնէ մեր ազատագրական գործի համար։

Վերջապէս. ժողովուրդը ապըստամբական տրամադրութիւն ստացաւ եւ իրը միակ պաշտպան, բարեկամ «ընկերութիւնը» է ճանաչում։ Դժուարութիւնների կէսը բարձված է, որովհետեւ յեղափոխականի հետ է Հայաստանի վիրաւոր դիւղացին, բայց ոչ զէվզէկ բանաստեղծը, ձկան արիւնով գրագէտը եւ բարոյապէս ընկած ու փչացած չարչին։

ՎԱՐԴՈ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, 2 Յուլիս

Մէկ երկու շաբաթէ ի վեր Պատրիարք եւ Վարչութիւն միացած թուղթ մը կը պատրաստէին Սուլթանին ներկայացնելու համար։

Այս թուղթը յղացուած էր Պատրիարքին Լահէյի Վեհաժողովին քաշած հեռագրին տխուր տպաւորութիւնը ջնջելու համար եւ կարեւորութենէ բոլորովին զուրկ էր. վասն զի այդ թուղթին մէջ գրուածները պարզապէս մինչեւ հիմա հազար անգամ գրուած, խնդրուած եւ պահանջուած բաներն էին. զոր օրինակ Սսոյ գործը, ճամբորդներու գիւրութիւն տրուիլը, աւերակ դարձած եկեղեցիներուն շինութիւնը եւ այլն եւ այլն, որոնք Սուլթանն ալ գիտէ, մենք ալ գիտենք եւ եւրոպացւոց մեծագոյն մասն ալ իմացած է։

Թուղթը պատրաստուած էր եւ չորեքշաբթի տորպեդուելով նոյն օրն իսկ պիտի մատուցուէր, երբ երեքշաբթի օրը Պատրիարք եւ Յարութիւն փաշա պալատ կը կանչուին, ուր առաջին քարտուղարը կըսէ իրենց թէ, «Սուլթանը ձեր առակս խնդրոց կարգադրութեան համար հրամայած է Բ. Դրան եւ մինչեւ 15 օր գործադրութիւնը կը տեսնէք, հետեւաբար մասնաւոր թուղթ տալու պէտքը չկայ»։

Ասոր վրայ յաջորդ օրուան Խառն Ժողովը յետաձգեց դրին արուիլը եւ հիմա օր օրի կարգադրութիւններու կը սպասենք։

Հարկ չէ անշուշտ ըսել թէ այս կարգադրութիւն ըսուածն ալ քովը դնելու է այն կարգ մը կարգադրութիւններուն՝ զորս Սուլթանն ու Դուռը շարունակ խոստացան եւ չգործադրեցին։

Պատրիարքին եւ Յարութիւն փաշային պալատ կանչուելովթուղթը չտրուելուն յորդորը, հասկցուեցաւ որ Եւրոպական եւ տեղական մամուլին մէջ այս մասին եղած յիշատակութեան արդիւնքն է եղեր. մինչեւ իսկ դեսպանական մարմնոյն մէջ խօսք անցեր է եւ կարեւորութիւն տրուելով տեսակցութիւններու մէջ խնդրոյ առարկայ եղեր է։

Կերեւայ թէ Սուլթանին է՛ն նուրբ չիլին կը դպչի, երբ իրմէ զատ մէկը կը զբաղի հայերով զոր ջնջելու եւ հնութեան առարկայի մը նման հպարտագիտ ազգ մը դարձնելու ծրագիրը ունի քանէն աւելի տարիներէ ի վեր։

Այս միջոցին Օրմանեանի գիրքը շատ խախուտ է յաչս ժողովրդեան. Պոլսոյ մէջ չկայ մէկը որ իմացած չըլլայ հեռագրին խնդիրը եւ զզուանքով բերան չառնէ այս անկգամ հրէշին անունը. այս ամէնքը գիտէ կիմանայ եւ կը գրեն իրեն, որոնց ճիւաղային ծիծաղ մը միայն կունենայ իրը պատասխան։

Բայց կը վախնայ ալ մեր Օրմանեան էֆէնտին. մէկ կողմանէ առանց դադրելու իր շնութիւնները կը շարունակէ եւ միւս կողմանէ ալ կը պատուիրէ որ իր քովը անծանօթ մարդ չբերեն։

Խելքը միտքը պատելու տուած է. պատարագ, քարոզ, հանդէս, փառք, ահա բոլոր մոռածածը։ Ժողովուրդը որ կը գանի երեսը նայելու, չուզեր այլեւս մտիկ ը-

նել ղինքը բայց ինք ինքզինքը հրաւիրել կուտայ բռնի և կուզէ ամէն տեղ երեւալով ժողովրդական դառնալ և թաղային սնտուկներուն բեռ ըլլալ։

Ներսէսի և Իղմիրլեանի սատացած համակրութիւնը իրեն քուն քնացնել չեն տար ու ամէն հնարք ի գործ կը դնէ որ թէ՛ աթոռին վրայ մնայ և թէ՛ ժողովուրդին փառաբանութիւնը վայելէ. բան մը ղոր չպիտի կրնայ երբէք ունենալ։

Սահմանադրութիւնը թաղելու ճիգը կը շարունակուի. հրամանը անդառնալի է և գործադրելու պաշտօնը յանձնուած է Պատրիարքին. քաղաքականութեան գլխաւոր ուժ ստուղներէն մէկուն Գաբրիէլ Նորատունկեանի՝ որ իր բնաձին ճարտարութեամբը անշուշտ այս գործն ալ ի գլուխ պիտի հանէ։

Թղթակցութիւնս վերջացնելու համար Պատրիարքին մէկ գարշելի մատնութիւնն ալ ծանուցանեմ որ է. անցեալ օր Ա. քարտուղարին դացեր բողոքեր է թէ Կրօն. Ժողովոյ ատենապետները և անդամներէն ոմանք արդելք կըլլան ի շահ կառավարութեան ըրած ձեռնարկութիւններուն։

Ե՞րբ արդեօք պոնէ արտասահմանի հայերը բան մը պիտի խորհին և աղգը պիտի ազատեն այս հրէշին ձեռքէն. մենք անկարող ենք. մեր բոլոր ուժերը կաշկանդուած և ջախջախուած են. մեր յոյսը դուք էք, մինչ մենէ ձայն հանողը կորսուած է։

ՄԺՂՈՒԿ

Ց. Գ. — Վերջին պահուն կիմանամ թէ կառավարութիւնը կը հերքէ Մշոյ մէջ տեղի ունեցած վերջին դէպքերը և զանոնք «քոմիթէ»ի գործեր կանուանէ։

Պոսթոն, 21 Յունիս

Զէյթունէն յետոյ Վան է որ կը յուզէ Ամերիկայի հայ գաղութները։ Ժրաջան փութկոտութեամբ մը, բանւոր հայեր կը բանան իրենց քսակը և կուտան իրենց կարողութեան չափով Վանը սովէ ազատելու։

Մարդ կը հրճուի տեսնելով այդ ուրախ դէմքերը որ հրճուանքով մը իրենց քսակը կը պարպեն իրենց եղբօրը օգնելու նպատակաւ։

Արիւն քրտինքով մէկ քանի տոլար վաստկողներ շատ անգամ իրենց վերջին լուման ալ կուտան. բայց մի զարմանաք որ հոս ալ կռնակի վրայ հանդիսատ պառկող հարուստները հանգանակութեան կամ հանդէսի օրերը քաղաքներէն կը փախչին, որ չըլլայ թէ... գործաւորի մը չափ առատաձեռն դտնուին։

Գովելի է Վաղինակ և Մաշթոց վարդապետներու ջանքերը, այս մասին ասոնք ազգային ամէն բարի ձեռնարկի ձեռնամուխ կըլլան և հանգանակութիւններու ալ կը մասնակցին, իրենց ապրուստին համար յատկացուած չնչին գումարէն մաս մը անոր բաժին հանելով։ Ո՞վ կրսէ թէ ասոնք սեւագլուխ կղերա՛ականներ են. չէ կղերական ըլլալէ առաջ ճշմարիտ հայեր են և մենք կը սիրենք ու կը յարգենք զիրենք։

Կը հրճուիք անտարակոյս որ գէթ երկու եկեղեցականներու մասին բարի լուրեր կընդունիք։ Ասոնց քով փճացածներ ալ կան. ինչպէս Նիւ Եօրքի Խադ վարդապետ որ լաւ կըլլայ խորդ անուանել։ Ասիկայ Պոսդոնի մէջ օտարներու առջեւ հայ կղերի անունը արատաւորելէ յետոյ Նիւ Եօրք դնաց, ուր փորը կը լեցնէ և զուարճութեանը կը նայի։ Կը զարմանանք որ Նիւ Եօրքցիները մինչեւ այսօր անոր տունը իր կռնակը չը տուին։

Ասկէ աւելի վատը կայ. Օրմանեանի ձագուկ Սարաճեան եպիսկոպոսը, որ ես աղատ երկրի մէջն անգամ Պոլսոյ Շէխ-Պատրիարքի քաղաքականութեան կը հետեւի։ Արժանահաւատ ապրիւրէ մը կը տեղեկանամ թէ վերջերս Նիւ Եօրք այցելած միջոցին. ըստ իր սովորութեան կերթայ յոտս թրքական դեսպանին իր խորհին շնորհակալութիւնները մատուցանելու և պատեհութիւն չը փախցուներ յարձակիլ Նիւ Եօրքի «Տիգրիս» և նոր հրատարակուող «Հայրենիք» թերթերու վրայ։ Կը խոստանայ ամէն ջանք թափել որ այդ թերթերը խափանուին։ Եթէ այս եպիսկոպոս ըսուածի պաշտօնը քիչ մըն ալ մեծ ըլլար թերեւս ինքն ալ հակահայկական հեռագիր մը տար Լահէյի ժողովին։

Հակառակ Սարաճեանի ջանքերուն մեր թերթերը կը շարունակուին։ «Հայրենիք» կարճ միջոցի մը մէջ իր շուրջ հաւաքեց գրողներու մեծ խումբ մը, որոնց մէջ աչքի կը զարնեն հայ կանայք, որ օրէ օր գրական ասպարէզը կուգան մեզի գործակցելու։ «Տիգրիս»ն ալ «Հայրենիք»ի երեւան գալէն ասդին բաւական նախանձով մը փոխեց իր ծաւալը և դադրեցաւ ծանուցումներու տոպրակ մը ըլլալէ. բաղդատմամբ առաջին վիճակին շատ լաւ է։

Ցարակոյս չունինք թէ մեր թերթերը մեծ օգուտ պիտի հասցունեն թէ այսաեղի հայոց և թէ հայրենիքի մէջ տառապող մեր հայրենակիցներուն։ Արդէն սովելոց հանգանակութեան մէջ կատարեցին իրենց դերը. «Տիգրիս» շաբաթ մը ծախուեցաւ ի նպաստ սովելոց. իսկ «Հայրենիք»ի խումբը Նիւ Եօրքի մէջ ներկայացումը առաւ այդ նպատակաւ։

Մէկ դէջ երեւոյթ մը կայ. այս թերթերը իրարու հաշտ աչօք չեն նայիր. «Տիգրիս»ի խմբագիրներէն մէկը շատ ճինկօ է և կուզէ կռուիլ վասն զի... լաւ բան գրելու պաշար չունի։ Ըստ ամենայնի թէ իր միւս ընկերները պիտի զսպեն զինքը։

Լէօ

Թաւրիզ, 8 Յունիս

Միրզային փնտռում են

Այս երկրորդ անգամն է, որ Միրզային փնտռում են, ուզում են իմանալ ո՞վ է. եւ դիտէ՞ք ի՞նչի համար, որպէս զի նրան վնասեն, նրա անաչառ գրչի ուժը կոտորեն եւ ազատ ու համարձակ իրանց էնարիկները խաղան։ Եւ աւելին կայ, որպէսզի նրան կառավարութեան յանձնեն պատժելու համար եւ կամ նրա հացին վնասեն գրասենեակի պաշտօնից զրկելով։ Այո՛, ո՛րիշ եւ ոչ մի բան։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՆՆՈՒԹԵԱՆՑ ՎՆԱՍՆԵՐԸ

—

Ա.

Կարդացի «Քննութեանց օգուտը» խորագրով բազի—դիտական յօդուած մը սրով հեղինակը՝ արհեստին մէջ եփած ձեռնհաս մանկավարժի մը վայել վճռողականութեամբ, կը ճգնէր հաստատել թէ՝ «առանց բացառութեան մեր տղոց ինչպէս նաեւ աղեղնի տղոց մանաւանդ հրապարակային քննութիւն ընելն, օգուտ զուրկ չըլլալէ զաս հարկ անհրաժեշտ իսկ է»...

Բայց գիտէք թէ ինչո՞ւ համար մեր տղաքը այդ հրապարակային քննութիւն կոչուած տաժանքին ենթարկել անհրաժեշտ է. որովհետեւ պարոն յօդուածագրին կարծիքով աշակերտները քննութեանց շնորհիւ ամբոխին առջեւ ազատ համարձակ խօսիլ կը վարժին, իրենց յիշողութեան, երեւակայութեան եւ ընդհանրացման կարողութիւնները կը զարգացնեն եղեր...։

Աւելին կայ.

«Գիտնալով որ երեխան ալ ունի իր կազմութեան մէջ միեւնոյն գործարանները զոր ունի չափահաս մը. գիտնալով որ այդ գործարաններէն իւրաքանչիւրը միեւնոյն կոչումը ունի մէկուն եւ միւսին քով» եւ թէ, «առանց բացառութեան որ գործարանը որ ըլլայ, երեխային աշխարհ գալուն յաջորդ օրը պարտի գործել, աշխատիլ»... ուրեմն «ինչպէս պատանին նոյնպէս եւ 5—6 տարեկան տղեկը պարտի քննութեան ենթարկուիլ»։

Ամենաքաղաքակիր աւանդականութիւն մը՝ (բութին) հրապարակային քննութեանց աւանդականութիւնը ջատագովող այդ խիստ միամիտ տողերը կարդացող ոեւէ չարաճճի ուսուցիչ մը, բաւական է որ քիչ մը մանկավարժութենէ հասկնայ, չպիտի կրնայ ինքզինքը զսպել հեգնական խոշոր բացագանչութիւն մը արձակելէ։

Մենք Տալսաօի եւ ուրիշ հանճարեղ դրողներու մանկավարժական արտաքոց կարծիքները որքան լսելու վարժ ըլլանք, դարձեալ տարօրինակ կը թուի Պ. Զարդարի մը հրապարակային քննութեանց մասին գրած խիստ սրտակեղրոն ճառատուութիւնը, որով անուղղակի կերպով կը ներբողէ չինական մանկավարժութիւնը, որովհետեւ գերազանցապէս քննութեան երկիրը Զինաստան է։ Հոն, երանելի մանտարինները իրենց անցուցած տասնեակներով հրապարակային անվիա քննութեանց շնորհիւ, ըստ Պ. Զարդարի, հարկ էր որ հիմա համարձակ ճարտասաններ, սուր յիշողութեան ու լաւ երեւակայութեան տէր անձնաւորութիւններ ըլլային։ Կեցցէ՛, ուրեմն Զինական մանկավարժութիւնը, որու չատ կը նմանի մեր հրապարակային քննութեանց արդի եղանակը, եւ եթէ այսպէս շարունակենք, կը յուսամ թէ, մանաւանդ Զարդարներու ջանքերուն, շնորհիւ, երկնային կայրութեան բնակիչներուն բնաւ նախանձելու պատճառ մը չենք ունենար։

Բայց Եւրոպայի ալ խօսք կըլլուի եւ կըսուի թէ «ամէն երկրի մէջ, ամէն տեղ ուր կան մեծ ու պզտիկ վարժարաններ, առհասարակ կը քննեն»։ Այո. սիրելի պարոն. կը քննեն բայց ոչ մեզի պէս։ Եւրոպայի քաղաքակիրթ երկիրներու ամենայտնի գիւղին մէջ իսկ չկայ մարդ մը որ ձեզ պէս կարծէ թէ՝ քննութիւնները աշակերտներուն մտաւոր կարողութիւնները, կամ խառնուածքի այս կամ այն յատկութիւնները զարգացնելու նպատակ ունին եւ թէ հարկ է 5—6 տարեկանէն սկսած զանոնք հրապարակային քննութեանց ենթարկել։

Այ՛ո, Եւրոպայի մէջ ալ կը քննեն աղաքը. բայց ո՛չ ձեր ըսած նպատակաւ եւ ո՛չ ձեր գիտցած եղանակաւ. հետեւաբար մեր քննութիւնները Եւրոպական վարժարաններու մէջ եղածներուն հետ կարելի չէ բաղդատել։ Հակառակ այն փաստին որ Եւրոպացիները քննութիւնը զօնsroշի համար կը կատարեն, որովհետեւ քննութեան գոյութեան միակ իրաւունքը այդ է, եւ հակառակ անոնց այդ քննութիւններուն չատ խելացի եւ նպատակայարմար եղանակաւ կատարուելուն, դարձեալ նշանաւոր մանկավարժներէ, գիտուն հոգեբաններէ եւ փորձ բժիշկներէ բաղկացած ահագին բանակ մը կայ, որ ամէն օր կը կռուի, քննութեանց բարձումը կամ գոնէ աւելի թեթեւացումը կը պահանջէ։ Ատոնք ինչպէս դուք կուզէք կարծել, մէկ երկու հոգի չեն. խնդրեմ գոնէ չաբաթ մը հաճեցէք թղթատել մանկավարժական ոեւէ թերթ մը կամ հանդէս մը, հոն պիտի հանդիպիք գրեթէ ամէն օր քննութիւններու մասին գրուած քննադատութիւններու եւ բողոքներու։ Ինչպէս ամէն նախապաշարում եւ հաստատուած դրութիւն չուտով կարելի չէ փոխել, այդ պատճառաւ է որ Եւրոպայի մէջ ալ աղաքը չատ տեղ քննելէ դադրած չեն, բայց բողոքողները գոնէ ահագին փոփոխութիւններ եւ դիւրացումներ մտցուցած են քննութեանց եղանակին ու չափին մէջ։

Եւրոպական վարժարաններու քննութիւնները մերիններուն հետ չբաղդատուիլը ըսելէ յետոյ, յաջորդ թուով պիտի բացատրեմ թէ՝ մեր հրապարակային քննութիւնները որքան անմիտ են եւ որքան վնասակար աշակերտին առողջութեան ու վարժապետին բարոյականութեան տէսակէտով։

Կ. Պիօն

րի նպատակ չունին, որովհետեւ, եթէ յետին մտքերի չեն ծառայում, կարող են հերքել մեր գրածները իրանց յետագիմական օրգանում, Թիֆլիսի «Ներ-Դար» փողոցային թերթում։

Ահա մենք այս բոլորը շատ լաւ գիտնալով, վերջերս գրել էինք թէ մի կարգ ստոր արարածների մատնութեան զոհ չը դառնալու համար ծածկել ենք մեր իսկական անունը. եւ եթէ Պարսկահպատակ չը լինէինք այն ժամանակ կարող էինք յայտնել մեր իսկական անունը. քանի որ պարսկաստանում օրէնք գոյութիւն չունի, կամայականութեան զոհ կարող ենք դառնալ. հետեւաբար իրաւունք ունինք մեր անունը ծածկելու. հակառակ դէպքում չէինք կարող գրել ամէն բան ազատ ու համարձակ։

Միրզայի գրածների ճշմարտութիւնը կասկածանքի տակ ձգելու եւ նրա ոյժը տկարացնելու համար դարձեալ դիմում են ամենացած եւ ամենաստոր միջոցների. Նրանք ասում են «կարեւորութիւն չտալ Շարժումի գրածներին, Միրզայի գրածներին։ որովհետեւ Շարժումը օրգան է եղած Դաշնակցութեան(.°), Միրզան էլ անպատճառ Դաշնակցական է լինելու, եւայլն»։

Շարժումի ընթերցողները անշուշտ աչքի առաջ ունենալով մեր գրածները, կարող են իմանալ թէ որ ասորիճան ձրի զրպարտութիւն է մեզ վերագրուած խօսքերը։ Մենք մինչեւ ցարդ որեւէ բան չենք գրած յեղափոխական այս ու այն կուսակցութիւնների մասին, մեր գրելիքները եղել են միշտ հասարակական խնդիրների շուրջը եւ այդ խնդիրներում ստոր դերեր կատարողների մասին։ Մենք, կրկնում ենք, յարգում ենք բոլոր յեղափոխական ճշմարիտ կուսակցութիւնները եւ համակրում ճշմարիտ գործիչներին, եւ յաւիտեան ատում ենք այդ զանազան կուսակցութեանց մէջ սպրդող ստոր եւ անազնիւ անդամներին։ Այս է մեր դաւանանքի հաւատամքը եւ այս կը լինի մինչեւ վերջը։

Ինչ հարկ կայ միամիտ ժողովրդին մոլորեցնել Շարժումը կուսակցական օրգան է, նրա մէջ գրողները կուսակցականներ են, եւայլն, ասելով. եթէ գրուածքները ուղիղ չեն, եթէ (ձեզ նման) խնդիրները խեղաթիւրուած են ներկայացուած, ազատ էք «հազար», «թղթակից» «աս», «***, եւայլն ծածկանունների տակ հերքել մեր գրածները, անշուշտ ճշմարիտ փաստերով։

ՄԻՐԶԱ.

ՕՐՈՒԱՆ ՆԻՒԹԵՐ

Փ. Պոլիս հանդարտած. — Ռուսչուք ապէկոծ. — Ուսուցչական բարոյական. — Ընտրութիւնները

Երկար տարեներքին երկպառակութիւններու, կռիւներու թատերավայր ըլլալէ, եւ բաւական տարեն մտմուլն ու միտքերը զբաղեցնելէ ետքը. Փ, Պոլիս վերջապէս կը հանդարտի եւ կը գտնէ իր սովորական խաղաղ վիճակը։

«Շարժում» շատ կանուխէն նկատեց որ այդ բոլոր խռովութիւններու պատճառը թափառական վարդապետ մըն էր եւ անոր հեռացումովը ամէն բան պիտի վերջանար։

Ամէն քաղաքի եւ ամէն կարգի պաշտօնական մարմիններու մէջ կրնան թիւրիմացութիւններ, նոյնիսկ գաղափարներու տարբերութիւններով վէճեր ծագիլ. խելացութիւնը հոն է որ ատոնք շարունակուին ու վերջանան օրինաւոր ճամբով, եւ ոչ թէ ջուր պղտորողներու ձայնին ականջ կախելով եղերական ու անպատուաբեր վախճանի մը յանգին։

Փ. Պոլսեցիները, որոնք բարոյապէս տուժելէ զատ, բաւական ալ սիրա, հոգի ու դրամ ծախսեցին, անշուշտ իրենց կարիշին վրայ զգացած փորձովնին, շատ լաւ ըմբռնած ըլլալու են որ ամէն ինքնակոչ ազգասէր անկեղծ չէ, ոչ ալ բեմին վրայէն կեղծ արցունքներ թափողը ժողովրդի շահերուն պաշտպան։

Փառք աստուծոյ, իրենց մէջ ոչ մարդ կը պակսի, ոչ դրամ եւ ոչ ալ կամք. վեհանձնութիւնը թող ունենան վերջնականապէս մարել մոխիրի տակ թաղուած կայծերը, արհամարել դուրսէն եկած սադրանքները, եւ այն ատեն նորընտիր Թաղ. Խորհուրդը, առաջադէմ երիտասարդութեան օժանդակութիւնովը կարող պիտի ըլլայ եղածները դարմանել, եւ մանաւանդ վարժարանները՝ որոնք այնքան ինկած են, բարձրացնել կարող պաշտօնեաներով։

Կրսպասենք որ օրէ օր լաւ լուրեր առնենք Փ. Պոլսէն, զորս ուրախութեամբ պիտի արձանագրենք։

* * *

Դժբաղդաբար Փ. Պոլսոյ հակառակ ուղղութեամբ կը քալէ երբեմնի Եդէմ, երջանիկ Ռուսչուքը, որ իր դպրոցի տնօրէնի պատճառով, կը շարունակէ ալէկոծիլ ու պղտիկնալ։

Ռուսչուքի ներկայ տագնապալից վիճակին խորը եթէ պրպտենք, պատճառը նոյն յաւիտենական խառնակիչ վարդապետը պիտի գտնենք։

Երկու տարի առաջ Վառնայի Ազգ. վարժարաններու ներկայ ուսուցչական խումբը պաշտօն կը վարէր հոն. պաշտօնէութիւն և ժողովուրդ շատ գոհ էին իրարմէ, մինչեւ որ հոն ինկաւ, «այցելու հովիւը», քաղաքը իրար անցուց և ներկայ տնօրէնը պաշտօնի կանչուեցաւ։

Համալսարանականի մը համբաւին առջեւ պահ մը միտքերը ճկեցան. բայց հիասթափումը շուտով վրայ հասաւ. մանկավարժութիւնը նոր մէթոտով մը, բիրով ու հայհոյանքներով երեւան եկաւ, ընդհարումներ ուսուցիչներու մէջ, ծեծկուռք աշակերտներու և անոնց ծնողքներուն հետ, և որ վերջապէս պսակուեցաւ փողոցային կռիւներով. որոնք այնքան վարկաբեկ ըրին անօրէնը ու ամօթահար հոգաբարձութիւնը։

Պ. Սարգիս-Գիւլեանի մեծագոյն սխալը հոն եղաւ, որ երկրորդ տարեշրջանին փոխանակ լուրջ, հմուտ ու կարող պաշտօնակիցներ հրաւիրելու իր մօտը, կարգ մը երեխաներ ժողովեց և անոնց վրայ թաղաւորեց։ Եւ ի՞նչ թաղաւորութիւն. իր մանկըլուիկները գրգռեց որ աջ ու ձախ հայհոյութիւններ փսխեն, կապելայի աշակերտի մը արժանի լեզուով զրպարտեն, ստեն կարծելով թէ այդպէս պիտի յաջողին իրենց սպանիական ամբարտակը բարձրացնել վեր. և հետեւանքը... ամէն մարդ գիտէ։

* * *

Մենք պահանջողներ չենք որ ուսուցիչ մը կատար մը հայի համար ամէն մարդու գլուխ ծռէ, զոհէ իր մասնաւոր համոզումները և օտարոտի, անհեթեթ գաղափարներ որդեգրէ։ Այսպիսիները կրնան մակաղատեղիները երթալ քան վարժարան։

Գաղափարական ուսուցիչ մը կուռող մը պէտք է ըլլայ, մանաւանդ մեզի պէս թերակիրթ հասարակութեան մը մէջ, երբ այնքան նախապաշարումներ կան վերցնելիք, սխալ ըմբռնումներ ուղղուելիք, բայց ատոնց համար հարկ չէ փողոցը իջնել։

Ուսուցիչը որ հանրային բարոյականը ուղղող ու կազմակերպող է, այդ բարոյականի ծայրագոյն աստիճանը իր վրայ պարտի ցոյցնել, հոգեւորականէ մը աւելի մաքուր պէտք է մնայ ան, և իշխանաղանէ մը աւելի բարձր, ու երբ կը մոռնայ իր դերն ու դիրքը, բոլորովին կոչնչանայ իր ազդեցութիւնը, կը կորցրի իր ուժը, որքան ալ հըմտութիւն ունենայ։

Ուսուցչի դէմ եղած քննադատութիւնն ու անոր դէմ մղուած հալածանքն պէտք է ծառայեն զանի բարձրացնելու ու կատարելագործելու և ոչ թէ իջեցնելու։

* * *

Ռուսչուքցիներու ուրիշ մէկ սխալն ան եղաւ որ, այս տարի ալ ընիկներու մէջ միայն կատարեցին Թաղ. Խորհուրդի ընտրութիւնը։ Բաւական ուսուար, հարուստ ու զարգացած գաղթականութիւն մը կայ հոն. տարիներէ ի վեր հոն հաստատուած տուներ. և ատոնք հեռի կը պահուին ազգային գործերէ. Զեմ գիտեր, արդեօք կը վախնա՞ն թէ այդ եկուորները իրենց եկեղեցին ու դպրոցը կառնեն կը փախին, թէ դանոնք հայ և իրենց եկեղեցիին ժողովուրդը չեն ճանչնար։ Ամէն պարագայի մէջ իրենք են որ տուժեցին ու պիտի տուժեն։

Ու երբ կը շարունակեն դեռ այս ուղղութեամբ քալել, ոչ պարտքերով ծանրաբեռնուած պիւտճէն պիտի բարւոքի, և ոչ վարժարաններն պիտի շինուի ու կանոնաւորուի։

ԵՐՈՒԱԶ

ԴՊՐՈՅԱԿԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐ

—

Կիրակի առաւօտ, եկեղեցիին աւարտումէն ետքը, քաղաքիս Ազգ. վարժարանաց մանկապարտէզի հանդէսը կատարուեցաւ վարժարանին մէջ.

Սբահը նեղ եկաւ երկսեռ հանդիսականներու բազմութեանը։ Պզտիկները՝ իրենց ուսուցչուհիներու. Օր. Սաթենիկ Դարունի և Վասիլուհի Փափազեանի առաջնորդութեամբ երկու ժամ երգեցին, խօսեցան ու պարեցին կատարեալ յաջողութեամբ, ինչ որ կապացուցանէր թէ, մանկապարտիզպանուհիները իրենց գործին տէրն ու դիտակ՝ ջանք չէին խնայած տարւոյն մէջ՝ իրենց պաշտօնը խղճմտօրէն կատարելու։

Ներկաները մեկնեցան շատ գոհ մնացած։

* * *

Ժամը երկուքն էր, նոյն օրը կէս օրէն ետքը, Անկէլ-Սլավոֆի սրահին մէջ կատարուեցաւ Հայկական Կրթարանի մանկապարտէզին և տարեկան վիճակացոյցներու բաշխման հանդէսը։

Հայկական Կրթարանի հիմնադիր-տնօրէն Պ. Կրօն Միքայէլեան, որ ջանք ու զոհողութիւններ չէ խնայեր իր հիմնած հաստատութիւնը բարձր ու բարեկարգ վիճակի մէջ պահելու, ամէն ճիգ թափած էր իր հանդէսը կանոնաւոր, փողփողուն և նշանակիչ ընելու։

Երգեցին ու պարեցին պզտիկները, խօսեցան, խաղացին ու նուագեցին մեծերը ներկաներու բուռն ծափահարութեանց մէջտեղ։

Վերջին խօսքը առաւ Պ. Տնօրէնը, բացատրեց իր հիմնադրութեան նպատակը, գովեց իր պաշտօնակիցները որոնք իրեն հետ աշխատած էին խղճմտօրէն, և շնորհակալութիւն յայտնեց անոնց որ նիւթապէս օժանդակած էին իր գործին։

Հանդէսը վերջացաւ ժամը 5ին, և հանդիսականները մեկնեցան, ինչպէս կըսեն սովորաբար, անուշ տպաւորութեան մը տակ։

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

—

ԳԱՀԻՐԷ, Պ. Մ. Խ. — Հաճեցէք ղրկել ուղղակի խմբագրութեանս։

ԲԱՐԻԶ, Պ. Շ. — Ձեր ղրկած բաժնեգինը դեռ չստացանք։ Գուցէ ձեզի վերադարձուն։ Դրամը կատանայ խմբագրութիւնը ոչ թէ պատասխանատուն։

——)·(——

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Լահէէն կը գրեն մեզ.

Պ. Մինաս Զերաչ, Հօլանտական խորհրդարանի բողոքական, պապական և ազատական անդամներէն և մամուլի ներկայացուցիչներէն յատուկ հրաւէր ստացած ըլլալով, քաղաքիս ոստիկանութեան արգիլած բանախօսութենէն աւելի կծու բանախօսութիւն մը պատրաստեց և անոնց նախագահութեան տակ արտասանեց յունիս 7ին յԱմստէրտամ և երէկ դիշեր յունիս 29ի Լահէ։ Ահագին բազմութիւն, աննկարագրելի ոգեւորութիւն։

— Յունիս 25 թուականը կրոնական պաշտօնական գրութիւն մը կը ծանուցանէ թէ ի նպաստ սովելոց տրուած առաջին ներկայացման հասոյթը 425 ֆրանք դանձուած է Պատրիարքարանի կողմանէ և նպատակին յատկացուած։

— Պօլսէն «Ալկէմայնէ Ցայթունկ» լրագրին կը գրեն. «Ըստ երեւոյթին կաշխատին հայ դիւղերը քրտական դարձնել, որովհետեւ հայերը կսիպեն որ Թողուն իրենց ամբողջ ստացուածքը և դիւղերէն հեռանան. երբ հայերը չեն համաձայնիր գաղթելու և կը հակառակին, այն ժամանակ քիւրտերը երկու հայ դիւղերու մէջ նոր քիւրտ դիւղ մը կը հիմնեն և շարունակ կսպառնան հայ դիւղացիներուն»։

— Օտեսայէն ռուս թերթ մը մեծ գովասանքով կը խօսի օրէրայի երգչուհի տիկին Ցէրեան Կօրգանեանի մասին, որ խաղացած է «Դարմէն»ը և Պ. Կոստանեան, որ խաղացած է Խոզէի դերը։

— Նպաստից յանձնաժողովը որոշած է 100 ոսկի դրկել Խիղան, 50 ոսկի Պիթլիս, 50 Ուրֆա, ուր երաշտութիւնը և մարախը մեծ փնասներ հասցուցած են հունձքերուն։

— Մոսկուայի յայտնի դրամատէր Ժամհարեան եղբայրները 10,000 ռուպլի ուղարկած են Պատրիարքարան՝ գաւառներու մէջ գտնուած սրբանոցներուն դրկելու համար։

—Խառն ժողովը որոշած է յանձնարարել Մշոյ Վարդան վարդապետին որ շարունակէ վարել առաջնորդական գործերը մինչեւ որ նորընտիր առաջ. տեղապահը իր տեղը հասնի։

— Զօրումէն 15 ոսկի և Պաղատէն 60 մէճիտիէ դրկուած է Պատրիարքարան Հայաստանի կարօտելոց համար։

— Վանէն կը հաղորդեն թէ Ներսէս եպիսկոպոս հեռդհեռէ կը շեշտէ իր պաշտօնի բնութիւնը. Վահրիճ վարդապետը փոխանորդ կարգած է ընթացիկ գործերը վարելու. կըսեն թէ Սրբազանը Պատրիարքարանի առաջարկած է որ Վահրիճ Բդի չը մեկնի, այլ մնայ Վան, քանի Ներսէսը հոն առաջնորդ է. իսկ Բդիի համար ուրիշ տեղապահ մը դրկեն։ Սրբազանը դիտաւորութիւն ունի Գաւառական Վարչութեան ժողովը և Խորհուրդը, վերակազմել։ Առայժմ՝ նոր Ուսումն. Խորհուրդ ընտրուած է։

Տօմինիկեան փեռերը 500 չափ ցորէն հաւաքած են կարօտ գիւղացւոց բաժնելու համար։

Բողոքական միսիոնարները նպաստը դադրեցուցած են։ Առաջնորդարանի և միսիոնարութեան մէջ պայքարութիւն ինկած է, և նպաստներու դործով որ միացեր էին, բաժնուած են իրարմէ։ Միսիոնար Բէյնալտ-իր խնամած 30ի չափ որբուհիներ այսօր ձգած է։

— Բալուի տեղապահը ամենէն աւելի նպաստի կարօտ 23 գիւղերու ցուցակ մը դրկեր է Պատրիարքարան։

— Գ. Ճեմարանի ուսուցիչ Մանուկ Աբեղեան կը պատրաստէ Գէորգ Կաթողիկոսի կենսագրութիւնը, որ Ճեմարանի պատմութեան հետ պիտի տպագրուի և. դեր։

Վահրամ եպիսկոպոս Մանկունի Ճեմարանի հաստատութեան պատմութիւնը դրեր դրկեր է Էջմիածին. բայց կարելի եղած չէ նոյնութեամբ հրատարակել։ Մանկունին արտօնած է քաղուածաբար հրատարակել այդ աշխատութիւնը։

— Ռուսահայ Սրապիոն քահանայ Սամուէլեան «Դիւցազանական անշարժութիւն» վերնագրով յօդուածի մը մէջ, որ ուղղուած է «Մշակի» երկրագործներու և վանքապատկան հողերու մասին խօսելէ յետոյ՝ այսպէս կը վերջացնէ։

«Մինչդեռ մեր ճեմարանաւորվարդապետները վազում են համալսարանական քաղաքներ ատուածաբանութիւն և երաժշտութիւն սովորելու...

Նրանք չը գիտեն որ Քրիստոս մարդկանց հետ շատ պարզ լեզուով է խօսած։

Բնական է որ «սիրես» նրա աւանդածն ու «ըստ այնմ կեանքըդ վարես» արդէն ասուածաբան ես ու աստուածաբան։ Գոնէ բժշկութիւն ուսանէին և մտնէին մեր երկրագործ ժողովրդի մէջ ու նրանց անօգնական հիւանդները ձրի բժշկէին։

Այո, զարդացած հայ հոգեւորականներ, երկրագործական ու բժշկական դիտութիւններ սովրեցէք ու գործ դրէք հայ ժողովրդի մէջ, որ կարողանաք օգտակար լինել...»։

Վերջապէս քահանան ալ աստուածաբանութիւնը կը հերքէ և դիտութիւն կուզէ։ Եթէ մեր հոգեւորականութիւնը գոնէ սատարի առաջ այդպէս մտածէր և ըստ այնմ գործէր, այս օր մենք շատ փորձանքներէ ազատ պիտի ըլլայինք։

Լաւ է ուշ քան երբէք։ Գոնէ այսուհետեւ մեր հոգեւոր տէրերը քիչ մը մարդու նման մտածեն։

— Շուտ մը մեզ կիմացնէ թէ երիտասարդութեան պահանջումն ու ճնշումը արդիւներ է Օրմանեան չիք պատրիարքի անուան յիշատակութիւնը տեղւոյն եկեղեցիին մէջը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Զինական հարցի վերաբերեալ Անգլօ-Ռուսական բանակցութիւններու ժամանակ, Սալզպրի քաղաքականութեան մէջ իբր միջազգային լեզու ընդունուած դպիրներէնի՝ փոխարէն անգլիերէն յայտագիր մը դրկեց կոմս Մուրավիէֆին։ Կոմս Մուրավիէֆ պատասխանած է Ռուսերէն լեզուով և պատուիրած է որ այսուհետեւ Անգլիական կառավարութեան հետ ունեցած բոլոր գրագրութիւնը կատարուի ռուսերէն լեզուով։

— Լօնտոնի մէջ բացուելիք կանանց համաժողովին պիտի մասնակցին և չինացի կիներ, որոնցմէ մին տօքթ. կան, բժշկութիւն ուսած է Ամերիկայի մէջ։ Ամերիկայէն ամենահարքիր կինը ըլլալու է «քահանայ» Աննա Շաու։ Ասիկայ առաջին կին քահանան է Միացեալ Նահանգներու մէջ։ Հոն շատ կին քահանաներ կան։ Օրիորդ Շաու իր քահանայական պարտաւորութիւնները կատարելու համար մեծ արդելքներու հանդիպելով ստիպուած եղաւ թափառական քահանայ ըլլալ. որովհետեւ Ամերիկայ շատ ազքատ ծուխեր կան, որոնք անկարող են մշտական քահանայ պահել։ Օրիորդ քահանան լաւ քարոզիչ մըն է։

— Սերպիական նախկին թագաւոր Միլանի պատճառաւ բոլոր ձերբակալուածները կը բացատեն իրենց մեղսակից ըլլալը դաւադրութեանը։

— Պէլկրատի մէջ հրատարակուող «Օդիէկ» թերթին երկու աշխատակիցները ձերբակալուած ըլլալուն պատճառով՝ թերթին հրատարակումը ընդհատուած է։

Մինչեւ հիմա ձերբակալուած են երեք նախկին նախարարներ, երեք պետական խորհրդականներ, երկու դատաւոր բարձրվճռաբեկ ատեանէն, համալսարանի հինգ բրոֆէսէօր, կիմնազիօնի 4 տնօրէն, չորս ուսուցիչ, ծառայ պատգամաւոր, չորս փաստաբան, երկու բարձր հոգեւորական, չորս ուսանող, երկու գնդապետ և երկու լատերէն։

— Աբբաս Թուման (Կովկաս) խաչ մը բարձրացուած են այն տեղին վրայ, ուր մեռած է Ռուսական գահաժառանգը։ Երեկ հոգեհանգստի պատարագ մատուցին։ Մեծ դուքս Նիքոլա Միխայիլովիչ եւ զինուորական ու քաղաքական բարձրագոյն պաշտօնեաներ ներկայ էին հանդէսին։

— Սերպիական թագաւոր Ալէքսանդրը ընդունած է ազդեցիկ ազատականներէն Անարէ Նիգոլիչը։ Վերջինս հանդիսաւոր կերպով թագաւորը վստահեցուցած է որ արմատական ազատականները մասնակից չեն Միլանի դէմ եղած դաւադրութեան։

— Պուլկար կառավարութիւնը մօտերս քսանեւհինգ միլիոն ֆրանքի փոխառութիւն մը պիտի ընէ օտար պանդաներէ, պետական անհրաժեշտ պարտքերը վճարելու համար, որը ամբողջապէս 40–45 միլիոնի կը հասնի։ Պանդաներու խորհուրդը անմիջապէս կը համաձայնի ընելու այդ կանխավճարը։

ՊՕՐՍԱ

Վառնա 7 Յուլիս

ՊՈՒԴՏԱՑ

Վակօն,	լիպրա 55—58,	հէքթօլ 9.75—10.50 ֆրանք
Արապա,	լիպրա 55—60	հէքթօլ 10—11 ֆրանք

ԱՐԲԱ

Լիպրա	42—50	հէքթօլ 5.80—6.40 ֆրանք

ՄԻՍԻՐ

Վակօն,	55—57 լիպրա,	6.10—6.20
Առապա,	55—60 լիպրա,	6 40—6.50

Կիւնտէ 10—12 վակօն, 8—10 առապա

Կէլմէքաէ տիր։

Առապա մուամէլէսի՝ Նաքօլէոն 21 ֆրանք հիսապը իլէ տիր.

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ „ՇԱՐԺՈՒՄ«Ի

Կը ապագրուին ամէն. լեզուէ այցեստաս, հասցէստաս, նամակագլուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ, ինչպէս նաև պրոշիւռներ։

Գիները յոյժ դիւրամատչելի։

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ

ՎԱՐԴՕ

ԵՐԿՈՒ ՍԷՐ
(ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ)

)(Գին 1 Ֆրանգ)(

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպէ՝ Տ. Անտոն Կոչի մօտ, Ռուսչուք՝ Հայկ Մալախեանի սրճարանը։

ԿՈՒԶԼՕՔ ՀԱՐՍՏԱՆԱԼ

Դիմեցէ՛ք

Մ. Թիւթիւնճեան եւ ընկ.
ի Ռուսճուք

Ուր ըստ առաջնոյն կը վաճառեն. Սոֆիա քաղաքի՝ Պուլկարական կառավարութեան կողմէ վաւերացած վիճակահանութեան Բ. չրջանի տոմսակները։

Օտար երկիրներէ յանձնարարութիւններ եւս կընդունուին։

Отговорникъ: А. СУКЯСОВЪ

Печати па „Взаимность“ Варна.